

տիպողական նորոգութիւնները անփոփոխ պահեցին խաչակրաց յօրինուածութիւնները (\*):

Ս. Յարութեան տաճարին Սրբավայրերուն խիստ համառօտ պատմականին հետ պիտի տանք անոնց կարևոր աւանդութիւնները:

#### Ա. Ս. ԳԵՐԵՉՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ս. Յարութեան տաճարին մեծ զմբէթին տակ կը լորածեւ սրահի մը մէջտեղը կը տեսնուի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Ս. Գերեզմանը՝ որ մատուռի մը նմանութիւնը ունի եւ երկու փոքր խորշերու բաժնուած ու ժայռի մը մէջ փորուած է: Աւետարանիչներուն նկարագրութիւնն հետեւեալն է. «եւ եզ ի կուածոյ գերեզմանի, ուր չէր բնաւ զոք եղեալ» (Ղուկ. ԻԳ. 53). «եւ էր ի տեղւոջն յորում խաչեցաւ՝ պարտեզ, եւ ի պարտիզի անդ գերեզման նոր յորում ոչ ոք երբեք էր եղեալ» (Յովն. ԺԹ. 41), «եւ եզ ի գերեզմանի՝ որ էր փորեալ ի վիմէ, եւ թաւալեցոյց զվէմ մի ի դուռն գերեզմանին» (Մարկ. ԺԵ. 46), «և եզ ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց ի վիմի, եւ թաւալեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ եւ գնաց» (Մատթ. ԻԷ. 60):

Ս. Գերեզմանի դուռը դէպի արևելք կը նայի, ուրկէ կը մտցուի առաջին խցեակը, որուն մէջտեղը կանգնած կը տեսնուի մարմարեայ սիւնածև քար մը, որ Հրեշտակի վիմ կը կոչուի (Հան. էջ 173): Այս տեղն է Յանոսից ըսուածը, ուր կանգնած էր երկու հրեշտակներէն մին՝ սպիտակ հագած, եւ որ, ըստ աւանդու-

(\*) Տնօրինական Ս. Տեղեաց հայկական աւանդական շինութեանց մասին տե՛ս զբնի վերջի Յանդուածը: